

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran  
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts  
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their  
gratitude to “JTI ARMENIA” CJSC  
for sponsoring the publication of this volume

**Մատենադարան**  
**Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և**  
**«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը**  
**երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին**  
**սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար**



MATENADARAN  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**BULLETIN OF MATENADARAN**  
**36**

Yerevan – 2023

МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
**36**

Ереван – 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**36**

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր), Վահան Տեր-  
Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե Թորոսյան, Թեո վան  
Լինտ, Արմեն Մովսիսյան, Արտաշես Շահնազարյան, Գուրգեն Գասպարյան,  
Արուսյակ Թամրազյան, Հայկ Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 36, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի  
ին-տ. Երևան, 2023, 304 էջ:*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ  
BOOK REVIEWS  
РЕЦЕНЗИИ

ԱՐՈՒՅՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ\*

DOI:10.57155/QOGV8221

Զաքարիա Ծայրագոյն վարդապետ Բաղումեան, *Կիրակոս Երզնկացու՝ Սուրբ Եւագր Պոնտացու երկերի լուծմունքները*, խմբագիր՝ Գ. Տէր-Վարդանեան, Երևան, Մատենադարան, 2022

Եվագրի երկերի լուծմունքների քննական բնագրերի  
պատրաստման և ուսումնասիրության կարևորությունը

Քաղաքի չէ, որ հայ միջնադարյան մատենագրական ժառանգության մի զգալի մաս հրատարակված չէ, առավել ևս՝ վերլուծված և մշակութային համաբնագրի մեջ ներմուծված, որտեղ բնագրերը ոչ միայն ամբողջացնում են այս կամ այն դպրոցի հոգևոր պատկերը, բացահայտում տվյալ մեկնության առաջացման պահանջը, այլև հաճախ գծագրում բոլորովին նոր քարտեզագրություն՝ այդ համաբնագրի մեջ առանձին բնագրերի նոր փոխառնչություններով, ավանդույթի անընդհատության ու փոխանցման նոր հատակագծով: Այս առումով հատկապես արժեքավոր են Զաքարիա Մ. վարդապետ Բաղումյանի աշխատանքները, որ գիտական իր կենսագրության ընթացքում վերհանում է Կիրակոս Երզնկացու երկերն իրենց քննության: Սրանցից շատերը մեզ են հասել միայն մեկ կամ երկու ձեռագրով: Ուսումնասիրողը դրանք ի մի է բերել, երբեմն հաստատել հեղինակային պատկանելությունը և հրատարակել՝ ամբողջացնելով Երզնկայի դպրոցի հարուստ ավանդույթի համապատկերը: Այս դպրոցը հանձին մեկ այլ համահավաք մեկնիչի՝ Հովհաննես Պլուզ Երզնկացու, հայտնի է մեկնողական «Ճարտարապետական» կառույցներ ստեղծելու, հայտնի դրույթները տարատեսակ պատկերավոր, գունեղ օրինակներով համեմելու (սա բնորոշ է և «Հարիւրաւորք»-ի՝ Կոստանդին Երզնկացու լուծմունքին), եղած մեկնությունները նոր ամբողջական կա-

\* Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ավագ գիտաշխատող, arusyak.tamrazyan23@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 1 դեկտեմբերի, 2023թ., հոդվածը գրախոսելու օրը՝ 11 դեկտեմբերի, 2023:

ոււյցները մեջ վերակերտելու շնորհով (այս մեթոդը հատկապէս արտահայտված է է նաև Կիրակոս Երզնկացու Սաղմոս ԻԸ, 3-ի [*«Ձայն Տեառն ի վերայ շուրջ»*] մեկնութեան մեջ՝ «Ձայն» եզրույթի բոլոր տարողութիւնների ընդգրկումով<sup>1</sup>):

Ներկա հատորը տարիների այս աշխատանքի հերթական արգասիքն է. այն ամփոփում է Եվագր Պոնտացու երկու երկերի՝ «Յաղագս Ը. խորհրդոցն» և «Հարիւրաւորք վեցերորդք»-ի՝ Կիրակոս Երզնկացու լուծմունքները: Եվագր Պոնտացուն, նաև Կիրակոս Երզնկացու աշխատանքին եղել են առանձին անդրադարձներ՝ Աշխեն Գրիգորյանի թեկնածուական ատենախոսութեամբ (Եվագր Պոնտացին հայ մատենագրութեան մեջ, 2014, հավելվածների բաժնում առաջին անգամ ներկայացված է երկրորդ բնագրից մի հատված՝ «Նորին պակասք հարիւրեկացն») և առանձին հոդվածներով<sup>2</sup>, ինչպէս նաև Եվագրի բնագիրը հրատարակած Հ. Բարսեղ Սարգիսյանի ծավալուն առաջաբանի՝ մեկնութիւններին նվիրված բաժնում և բուն բնագրի տողատակերում՝ Երզնկացու մեկնութիւնից<sup>3</sup> հատուկեմտ հատվածների ներկայացմամբ:

Գրախոսվող հատորը բազմաշերտ խնդիրներ է առաջադրում. նրանում ներկայացված երկու բնագիրն էլ կրկնակի հետաքրքրութիւն են ներկայացնում մի քանի պատճառով՝ առաջին հերթին նրանց ունեցած մեծ դերակատարութեան համար հայ ավանդույթում: Ուսումնասիրողը շեշտում է՝ Եվագր Պոնտացու երկերը դասավանդվել են, սրանցից արվել են շատ բանաբաղումներ, որոնք վկայում են այն մասին, որ «մասնավորապէս Սկևռայի, Երզնկայի և Տաթևի նշանավոր համալսարաններում և կրթական կենտրոններում մեծ տեղ է յատկացուել եւագրեան երկերի ուսումնասիրութեանը և սերտմանը» (էջ 68): Այս բնագրերն այնքան են կարևորվել, որ գրվել են նրանցից որոշների «պատճառներ»-ը՝ երկի ստեղծման դրդապատճառների, նպատակի ու հանգամանքների բացատրութիւնները (ուսումնասիրողը տալիս է դրանք պարունակող ձեռագրերի ցանկը): Եվագր Պոնտացին հայ ավանդույթում ստացել է Անապատի միտք կոչումը: Նրանից շուրջ հազարամյակ անց ստեղծված՝ Կիրակոս Երզնկացու երկու լուծմունքները գաղափարվել են մինչև ԺԷ-ԺԸ դարերը: Ս. Եվագրի ստեղծագործութիւնների այս տարածվածութիւնը պայմանավորված է վանական հոգևոր վարժանքներում նրանց

<sup>1</sup> Բաղումյան Զաքարիա արեղա, «Կիրակոս Վարդապետ Երզնկացու ԻԸ, 3 սաղմոսի մեկնութիւնը», էջմիածին, 2012, Գ., էջ 64-91:

<sup>2</sup> Ա. Գրիգորյան, «Յաղագս ուր խորհրդոց մեղաց Եւագրեայ» (Կիրակոս Երզնկացու և Մատթէոս Ջուլայեցու մեկնութեամբ), Աստվածաբանութեան ֆակուլտետ, Տարեգիրք, Բ., 2007, նույնի՝ «Եվագր Պոնտացու «Հարիւրաւորք վեցերորդք» երկի աստվածաբանութիւնը», էջմիածին, 2007, Զ.-է., էջ 91-99:

<sup>3</sup> Սրբայ Հօրն Եւագրի Պոնտացոյ Վարք եւ Մատենագրութիւնք, թարգմանեալք ի Յունէ և Հայ բարբառ ի հինգերորդ դարու, աշխատասիրութեամբ եւ ծանօթութեամբ ի իոյս ընծայեաց Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, Վեներիկ, 1907:

գործառույթով («Հպանցիկ հայեացք նետելով Ա. Եւագր Պոնտացու մատենագրական ժառանգութեան վերոգրեալ համառօտ նկարագրութեանը՝ համոզուած ենք, որ գործ ունենք վանական մի մատենագրի, խորհրդապաշտի եւ աստուածաբանի հետ, որի գործերը ծնուել են անդադար աղօթքի ու ճգնութեան միջնորոտում... նրա երկերը կարելոր են ... պարզելու եւագրեան մտածողութեան ազդեցութեան աստիճանը հայ վարդապետական մտքի անդաստանում», էջ 66), այլև նրանով, որ «որանք գրուել են նախքան 451 թ. Քաղկեդոնի ժողովը՝ արտայայտելով Լնդհանրական եկեղեցու աստուածաբանական մտածողութեան նախաքաղկեդոնական վիճակը» (էջ 68): Ըստ այդմ՝ հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել հայ միջնադարյան վանականության, նրա կենդանի ավանդույթի մասին առանց նրա հիմնաքարերից մեկը կազմող այս երկերի լուծմունքների քննության:

Վերջապես եվագրի «Հարիւրաւորք» երկն ինքնին բացառիկ է որպէս խորհրդապաշտական, այլև հոգևոր-իմացաբանական համապարփակ հանրագիտարան՝ աստվածային ոլորտներից, տիեզերական հոգևոր խորհուրդներով մինչ հրեշտակային ու մարդկային բնությունները.

«Եւագրի այս գրուածը, կրնանք ըսել՝ թէ անոր գրուածներէն ամենանշանաւորն է. վասն զի կը ներկայացնէ մեզ անոր ընդարձակ և խոր աշխարհայեցողութիւնքը՝ էակաբանական, աստուածաբանական, իմաստասիրական, բարոյական, կրօնական, կատարածախօսական (eschatologique), մեկնաբանական և բնական ծանօթութիւններով և առեղծուածներով ի միասին: Եւ այդ առածներն... մէկ կողմէն իրենց բազմապատիկ նիւթերուն և բարձրագոյն սկզբանց, և միւս կողմէն ալ հեղինակի լակոնական, նրբագոյն և միին ոճին համար՝ կրնային ոչ միայն անգէտներուն, այլ և գիտնոց իսկ թիւրիմացութեան առիթ և ենթակայ ըլլալ...»<sup>4</sup>:

Այս տեսակետից նման երկի՝ որպէս խրթին խորհուրդներով հագեցած ձևակերպումների շտեմարանի մեկնությունն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում, իսկ Կիրակոս Երզնկացու մեկնությունը միակն է հայ մատենագրության մեջ: Առհասարակ հայ միջավայրում նման մեկնությունները՝ որպէս համապարփակ ձեռնարկներ, երբեմն ոչ այնքան ինքնուրույն երկեր էին, որքան պետք է ներկայացնեին իրենց միջավայրի ու ժամանակի «համագիտելիքը»՝ տվյալ վանական դպրոցում հասանելի, նյութին առնչվող պատկերացումների, շրջանավոր բնագրերի ամբողջությունը: Բնագիրն այստեղ դառնում էր այլ բնագրերի համագրման ու ներդաշնակման «վայր»: Մասնավորապես՝ մարդաբանությունն առնչվող հատվածներում Կիրակոս Երզնկացին օգտագործում է Նեմեսիոս Եմեսացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Աստվածաբանի, Դավիթ Անհաղթի, Փիլոն

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 144:



Ալեքսանդրացու, ԺԳ. դարից մեզ հասած մարդաբանական մի անանուն բնագրի<sup>5</sup> և այլ երկերի պատկերները ու ձևակերպումները: Նա կիրառում է մեկնություն տարբեր շերտեր. երբեմն պարզ կերպով վերաշարադրում է Եվագրի ասույթը, երբեմն բացահայտում նրա բարդ ու անհասկանալի պատկերները (հմմտ. օրինակ՝ Եւագր, էջ 163՝ տան պահապանների, սյունների, վարդի ու բեհեզի պատկերները և Երզնկացու մեկնությունը՝ որպես համապատասխանաբար աշխարհ և հրեշտակներ, տարվա եղանակներ-սյուններ, վարդ-արեգակ, բեհեզ-լուսին, էջ 297), երբեմն դրվագում է սրա մեջ այս կամ այն բառի հետ կապված միջնադարյան դպրոցական մեջ բնագրից բնագիր թափառող ձևակերպումներ, վերապատմում կամ քաղում համընդհանուր մեկնողական շտեմարանից համապատասխան տեղին (օրինակ՝ դրախտի չորս գետերի և մարդկային առաքինությունների փրկոնյան մեկնությունը, էջ 273-274): Երբեմն էլ Եվագրի տված սուրբգրային խորհրդապատկերների հանգույցները «լցնում» է նոր մարդաբանական ճշգրտումներով, մանրամասնում մարդու կառույցներում նրա համարժեքների այլաբանություններով:

Բերենք Կիրակոս Երզնկացու մեկնության ամենաբնորոշ օրինակներից մեկը: Եվագրը նշում է «գաւրութին հասկին ի հատն է, և կատարումն նորա յընդունաւոքն ծածկեալ է, և ա՛յլ է հատն և խոտն և հասկն, և յարմատոցն ջան սկսեալ և յառաջ եկեալ ի հասկէն՝ ազատի և շտեմարանի»<sup>6</sup> (հմմտ. Մարկ. Գ. 26-29. «Այսպէ՛ս է Աստծու արքայութիւնը, որպէս թէ մի մարդ հողի մէջ սերմեր ցանի... սերմերը կը բուսեն ու կ'աճեն... նախ՝ խոտը, ապա՝ հասկը եւ ապա՝ ատոք ցորենը հասկի մէջ: Սակայն երբ սերմը իր պտուղը տայ, իսկոյն մանգաղ է ուղարկում, որովհետեւ հնձի ժամանակը հասել է»): Այս Ավետարանական խորհրդապատկերը Երզնկացին միավորում է Քրիստոսի այլ սերմնացանի առակի հետ (Մարկոս Գ. 3-8), որ ինքը՝ Քրիստոսը բացատրում է մարդկային սրտերի տարբեր հողերում Աստծո խոսքը սերմանելու խորհրդով (Մարկ. Գ. 14-20, [Մատթ. ԺԳ. 4-8, 19-23, Ղուկ. Լ. 5-8, 11-15]): Երզնկացին մանրամասնում է այս պատկերները մարդու հոգևոր կառույցներում և ընթացքի մեջ՝ համադրելով սրանք Գավիթ Անհաղթի նորալատոնական մարդաբանական տեսության, Գրիգոր Նազիանզացու ասույթի հետ ու դրվագելով միմյանց վրա բարձրացող քրիստոնեական երեք առաքինությունների ընթացքի մեջ: Ամենը՝ խոտը, հասկը, ցորենն ու քիստը, սերմի մեջ են աներևույթ կերպով և հետո են ի հայտ գալիս նրա բնությունից, որ, նետվելով մարդու բանական հողում՝ սրտում, հաստատվում, արմատանում է հավատով ու հույսով՝ արտադրելով խոտ՝ մարդու բնական (ի բնե մեզ հատուկ) առաքինությունները, հասկ՝ ձեռքբերովի առաքինությունները, սրանից են ծնունդ առնում տեսական ու գործնական [կարողությունները

<sup>5</sup> «Ի չորից գոյացեալ» սկսվածով այս բնագիրը, որը պատրաստում ենք հրատարակության, առկա է Մատենադարանի և այլ հավաքածուների մի շարք ձեռագրերում (տե՛ս օրինակ ՄՄ 3710, 263ա-270բ):

<sup>6</sup> Եւագր Պռնացի, էջ 149:

րը], գործնականը՝ որպես տեսականի հյուրընկալ (ասպնջական)՝ ինչպես ցորենի կճեպը ցորենի համար (էջ 247): Այլուր եվագրի խորհրդավոր խոսքերի ակնարկները բացահայտելով՝ նույն պատկերի առնչությամբ՝ նշում է՝ սերմը հավատն է, ամենի հիմքն ու արմատը, խոտը՝ բնական առաքինությունները, հասկը՝ ձեռքբերովի առաքինությունները, և ցորենը ուռճացած հասկի մեջ՝ տեսական իմաստասիրությունն ու [գործնական] սերը, որ տարածվում է ու բարձրանում հատիկի հավատի զորությունից (էջ 296-297): Այսպես է պատկերի միջոցով վերապրվում մարդու աստիճանական հոգևոր հասունացումն ու վերակերպումը՝ մինչ նրա անցումն այնկողմնային իրողությունների աշխարհ:

Այս բոլոր առումներով «Հարիւրաւորք»-ի լուծմունքը մեկնողական ձեռնարկի հարուստ օրինակ է:

Վերջապես, ինչպես հայտնի է, երկերի մեկնություններն ինքնին հետաքրքիր են, քանի որ ցույց են տալիս՝ ինչպես է տվյալ գիտելիքը, բնագիրը վերաիմաստավորվում այլ միջավայրում, ինչպիսին է այդ միջավայրի կամ պատվիրատու անձի հոգեմտավոր, կրթական մակարդակն ու մեկնիչի խնդիրը, ըստ որի ընտրվում են բացատրման ձևն ու հնարքները՝ նրա համար ավելի հասկանալի, գրավիչ օրինակներով վերակերտելու համար նախնական, ժամանակի ընթացքում կամ թարգմանություն արդյունքում խրթին դարձած բնագրերը:

Այս տեսակետից հետաքրքիր են պատկերավոր օրինակները, որ մեկնիչները հավելում են տվյալ երևույթն աշակերտի երևակայության մեջ ավելի տպավորելու համար, ինչպես, օրինակ, մտքի լույսի եվագրյան երեք բաժանումների (Աստծուն, անմարմիններին ու մարմնավորներին ուղղված) համագրությունն արեգակի, լուսնի ու աստղերի, և ճրագի լույսի հետ (էջ 271): Գեղեցիկ օրինակներից է մարդ-կավե անոթի պատկերը, որ միայն համբերությամբ թրծվելով ձանձրության բազմապիսի փորձությունների հրով, ամրանում է և ունակ դառնում ամփոփելու ու կրելու Սուրբ Հոգու շնորհների ջրերը (էջ 119, 219): Հետաքրքիր են ժԳ. դարի անանուն բնագրում այն մանկական-պատկերավոր զուգահեռ օրինակների հանդերձանքները, որ տրվել են հայ միջավայրում մեծ ազդեցություն թողած՝ Գրիգոր Նյուսացու և Նեմեսիոս Եմեսացու՝ մարդու կազմությանը նվիրված երկերի հիման վրա նոր բնագիր կամ վերաշարադրանք կազմելիս՝ մարդու և բնության համագրություններով (էջ 325, 335):

Բոլոր այս պարզեցված կամ բարդացված օրինակները կարող են վերա-

<sup>7</sup> Եւագր. «Այն որ կանխեաց էաո զհասկ հատին, եղև առաջին այնմ՝ որ էաո զհատն, և որ էաո զերկուան, եղև առաջին այնմ՝ որ էաո զերիսն. և տարածի մինչև ամբառնայ ի զօրութիւն հատին» (Եւագր. Պոնտացի, էջ 163), հմմտ. ««Երկուս» զհատն և հասկն ասէ, որ յառաջ է, քան զերիսն զցորեանն, որ ի հասկին մէջն է, զի նախ սեռմն է, և ապա խոտն, և ապա հասկն, և ապա ցորեանն առո՞ք ի հասկին, որպէս Տէրն հրամայէ յԱւետարանին» (Կիրակոս Երզնկացի, էջ 296):

կանգնել այս կամ այն միջավայրի և դպրութեան գույները: Հետաքրքիր են նաև այն բացատրութիւնները, որ մեկնիչները տվել են թարգմանութեան արդյունքում ձևավորված բառ-եզրույթներին և նրանց ավելի պարզ ու հասկանալի համարժեքներին՝ փորձելով զանազանել դրանք: Սրանց օրինակներ բերված են ուսումնասիրութեան մեջ:

Մատթեոս Զուղայեցին, եվագրի ութ խորհուրդներից բարկութեանն անդրադառնալով ներառում է նաև նույնիմաստ «սրտմտութիւն»-ը, փորձելով տարբերակել դրանք՝ ըստ բառի արտաքին տեսքի. սրտմտութիւնն այն է, ինչ մնում է սրտում, մինչդեռ բարկութիւնն արտահայտվում է նաև բերանով: Հավանաբար արտահայտված և շարտահայտված մնալու այս ձևակերպումից ելնելով Զուղայեցին նաև սահմանում է՝ սրտմտութիւնն այն է, ինչ զգում է փոքրը մեծի հանդեպ, իսկ բարկութիւնը՝ մեծը՝ փոքրի (տե՛ս «Կիրակոս Երզնկացու՝ Ս. Եւագր Պոնտացու «Յաղագս Ը. խորհրդոցն» աշխատութիւնը», ենթագլուխը, էջ 116): Նույն կերպ նա փորձում է բացատրել ս. եվագրի թարգմանութեան մեջ առկա «նորափառ» և համապատասխան հատվածում իր օգտագործած «անափառ» եզրույթների տարբերութիւնը (նույն տեղում, էջ 120):

Չորրորդ և կարևորագույն հանգամանքն այն է, որ եվագր Պոնտացու հայկական ավանդույթը հայ եկեղեցու յուրօրինակութեան, ինքնուրույն ճանապարհի արգասիքներից մեկն է: Կ. Պոլսի Ժողովում (553 թ.), որին շի մասնակցում Հայ եկեղեցին, ս. եվագր Պոնտացու և Օրիգենեսի՝ ոչ ուղղափառ հայացքներ դավանելու համար երկերի դատապարտման արդյունքում այդ երկերը բյուզանդական ավանդույթում հաճախ ոչնչացվում են կամ թաքնվում այլ հեղինակների անունների ներքո: Սրա արդյունքում եվագրի որոշ երկեր պահպանվել են միայն հայերեն և ասորերեն թարգմանութիւններով: Ըստ Հ. Բարսեղ Սարգիսյանի՝ «գրեթէ ամէն եկեղեցական կարգաց եւ կրեց, աւելի կամ պակաս, անոր հիւթեղ և հոգեշահ գրուածոց ազդեցութիւնը»<sup>8</sup>: «Հարիւրաւորք վեցերորդք»-ի՝ Կիրակոս Երզնկացու մեկնութիւնը բացառիկ է նրանով, որ երկի հունարեն սկզբնագիրը պահպանվել է միայն տասնհինգ տոկոսով, ինչպես նշում է ուսումնասիրողը, և այսօր հասանելի է գիտական շրջանակներին միայն ասորերեն երկու տարբերակով, և նրա խմբագրված, օրիգենեսյան շերտերից «ձերբագատված» տարբերակին առավել մոտ հայերեն թարգմանութեամբ (արաբերեն օրինակները դեռևս հրատարակված, քննված չեն), այլև նրանով, որ, ինչպես նշեցինք, այս երկի Երզնկացու մեկնութիւնը միակ օրինակն է հայ մատենագրութեան մեջ: Ըստ այդմ այն կարևոր տեղ պետք է զբաղեցնի եվագրի բնագրերի ողիսականի և նրա ավանդույթի հա-

<sup>8</sup> Եւագր Պոնտացի, ձեռ-ձեռն:

մաքրիստոնեական համապատկերում:

Սրանով ներկա աշխատությունը նաև ամբողջացնում է միջնադարյան եվագրյան համաքրիստոնեական ավանդույթի համապատկերը՝ որպես նրա մի յուրօրինակ ճյուղավորում, նպաստում ինքնին եվագր Պոնտացու ստեղծագործությունների հետ կապված մի շարք հարցերի ճշտմանն ու ամբողջացմանը և այս տեսակետից հատկապես հետաքրքիր իրադարձություն պետք է դառնա միջագային եվագրագիտության ասպարեզում:

### Ուսումնասիրության բովանդակություն

Ներկա հատորում եվագր Պոնտացու երկու երկի մեկնության բնագրերին նախորդում է ուսումնասիրություն, որտեղ նյութը բաժանված է և ենթաբաժանված՝ ըստ ուսումնասիրողի համար կարևոր հարցերի, կապված այս երկերի՝ հեղինակի և մեկնիչի անձերի, նրանց ստեղծման և կենցաղավարման հանգամանքների, թարգմանության, ազդեցության, մեկնությունների, նրանց համեմատության, հոգևոր միջավայրի և սրանց հատվող հարցերի շրջանակի հետ: Առաջին գլուխը նվիրված է Կիրակոս Երզնկացու՝ «կայծակնամաքուր» վարդապետների վարդապետի կյանքին և գործունեությանը՝ հիմնված ձեռագրական ավանդույթի քննության, հիշատակարաններում նրա անձի ներկայացվածության և ուսումնասիրություններում նրան անդրադարձների վրա (էջ 13-32 «Կիրակոս Երզնկացու կեանքը և գործունեությունը»): Ձեռագրական քննության շնորհիվ մասնավորապես իմանում ենք, որ Կիրակոս Երզնկացին հետաքրքրվել է հատկապես Փիլոն Ալեքսանդրացու, Գիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող երկերով՝ պատվիրելով գաղափարել նրանց ստեղծագործությունները: Վերջինիս ազդեցությունը հատկապես առկա է «Հարիւրաւորք»-ի մեկնության մեջ:

Երկրորդ գլխում (էջ 33-51 «Մատենագրական ժառանգութեան ընդհանուր բնութագիրը») հեղինակը ներկայացնում է Կիրակոս Երզնկացու անունով մեզ հասած ստեղծագործությունները, որոնցից շատերի քննական բնագրերը հրատարակել է ավելի վաղ: Հատկապես արժեքավոր են ուսումնասիրողի անդրադարձներն այն աղբյուրներին, որոնցից օգտվել է Կիրակոս Երզնկացին:

Երրորդ գլուխը նվիրված է եվագր Պոնտացուն հայկական ավանդույթի մեջ՝ նրա կյանքին և հայերեն թարգմանված երկերին (էջ 52-75 «Ս. Եւագր Պոնտացին հայկական աւանդութեան մէջ»), ուսումնասիրողը շեշտում է ս. Եվագրի բացառիկ դերը հայ միջնադարում՝ ներկայությունը Պատարագամատուցում, Յայսմաւուրքում, հայերեն ձեռագրերում, մանրանկարչության մեջ և այլուր՝ ներառելով ձեռագրական ավանդույթի հարուստ նյութը, իրեն նախորդող ուսումնասիրողների (մասնավորապես Ա. Գրիգորյանի, Հ. Բարսեղ Սարգիսյանի) տվյալները, այլև

միջազգային եվագրագիտական ասպարեզում ներկա հարուստ գիտական ժառանգությունը՝ ի մի բերելով և քննելով դրանք: Այս բաժինը հատկապես արժեքավոր է նաև հայ գիտական շրջանակին եվագրագիտության համապարփակ պատկերը ներկայացնելու տեսակետից:

Չորրորդ գլխում ներկայացվում է եվագր Պոնտացու Ութ խորհուրդների մասին երկի՝ Կիրակոս Երզնկացու մեկնությունը (էջ 76-123). այստեղ էլ շոշափվում է խնդրին առնչվող ավելի մեծ լայնույթ ութ խորհուրդների տեսությունը, նրանց ձևակերպման, համակարգման անհրաժեշտությունը չորրորդ դարում նոր թափ առնող վանական միջավայրում (ութ խորհուրդների և յոթ մահացու մեղքերի տեսությունը կենցաղավարում է զուգահեռ. առաջինն առավել վերաբերում է վանական միջավայրին, քանի որ ներկայացնում է մտածությունները դեռ գործած մեղքերից առաջ), այս համակարգի շարադրումը եվագրի՝ հայերեն թարգմանված այլ երկերում, այնուհետև այս տեսությունն առհասարակ հայ ավանդույթում: Սրանից հետո ուսումնասիրողն անդրադառնում է Կիրակոսի լուծմունքի ստեղծման հանգամանքներին և բովանդակությանը՝ գլուխ առ գլուխ: Համադրում է Կիրակոս Երզնկացու մեկնությունն այս երկի այլ՝ Մատթեոս Զուղայեցու և Գրիգորի անտիպ մեկնությունների հետ, համեմատում Վարդան Այգեկցու, Գրիգոր Տաթևացու, Կանոնագրքի համապատասխան կանոնների հետ՝ տալով ութ խորհուրդներին առնչվող պատկերացումների ամբողջությունը հայ վանական միջավայրում: Ըստ ուսումնասիրողի՝ Կիրակոս թաթևապետի այս մեկնությունն «առավելաբար ինքնուրույն աշխատութիւն է, որում հեղինակը... մեկնաբանում է» ութ խորհուրդները «աստուածաբանական, բարոյախրատական, մարդաբանական և այլ տեսանկյուններից» (էջ 97): Հայերեն լուծմունքում, ըստ ուսումնասիրողի, ի տարբերություն եվագրի, առավելապես շեշտված են խորհուրդների հալթահարման բարոյահոգեբանական և հոգևոր-ներանձնական կողմերը: Վերջին գլուխը նվիրված է «Հարիւրաւորք վեցերորդք»-ի լուծմունքին (էջ 124-169)՝ դարձյալ ավելի մեծ տարածության ընգրկելով՝ ավարտելով նրա ստեղծման հանգամանքների ու բնույթի առանձնահատկությունների քննությամբ: Այս խորհրդավոր երկի բնույթի, վանական միջավայրում նրա ընկալման տեսակետից հատկապես հետաքրքիր են խորագրի համեմատ պակասող գլուխների տարբեր մեկնություններն ու բացատրությունները՝ հայ միջնադարյան ավանդույթում, համաքրիստոնեական միջնադարում և ներկա ուսումնասիրողների աշխատություններում, որ ի մի է բերել և ներկայացրել ուսումնասիրողը (ըստ խորագրի՝ «Հարիւրաւորք վեցերորդք», եվագրի ստեղծագործությունը պետք է ունենա 600 գլուխ, մինչդեռ սրանք 540-ն են): Այս բացատրությունները ներկայացնում են թվային խորհրդաբանության տարբեր լուծումներ, նաև պակասող գլուխներին՝ որպես տողատակե-

րի, ծածկված գիտելիքի, գրվածի ետևում «անգիր» բնագրի առկայության ակնարկի մեկնաբանություններ:

«Հարիւրաւորք վեցերորդք»-ի բովանդակությունը ուսումնասիրության հատվածում, ելնելով իր բնույթից, ներկայացված է այլ կերպ՝ ոչ հաջորդական կարգով, այլ ըստ թեմաների, որ առանձնացրել է ուսումնասիրողը՝ յուրաքանչ-յուրում հավաքելով եվագրի երկի մեկնության տարբեր հատվածներում ցրված Կիրակոս Երզնկացու համապատասխան ասույթները՝ փորձելով համակարգել նրա տեսական հայացքները: Դարձյալ ուսումնասիրողը համադրում է բուն եվագրի ստեղծագործությունը, հայ մատենագրության մեջ այս կամ այն հարցին այլ անդրադարձները՝ սկսած Ագաթանգեղոսից, Նիդիցից մինչև Գրիգոր Տաթևացի: Սա է հատորի բովանդակային ամբողջությունը՝ հարցերի հիմնական շրջանակով, լայն ընդգրկումով, ձեռագրական հարուստ ավանդույթի արտացոլմամբ, որի հիման վրա ստեղծվել է աշխատանքը (օգտագործված ձեռագրական սկզբնաղբյուրների պատկառելի ցանկը՝ էջ 461-463):

Ուսումնասիրողը ողջ աշխատանքի ընթացքում համադրում է եղած այլ ուսումնասիրությունների արդյունքները, երբեմն հերքում-հաստատում այս կամ այն տեսակետներն ավելի մեծ լայնույթ ընդգրկող ձեռագրական ավանդույթի տրամադրած նյութերի, համաշխարհային եվագրագիտության արդյունքների և սեփական ուսումնասիրությունների հիման վրա: Գիրքն օժտված է գրականության, անձնանունների և տեղանունների, ինչպես նաև սուրբգրային ցանկերով:

Կցանկանայինք առանձնացնել ուսումնասիրողի՝ մեզ համար հատկապես կարևոր դիտարկումներից մեկը «Խրատ վասն խոստովանութեան» երկի որպես բացառիկ փաստաթղթի առնչությամբ. «Կիրակոս ըրբունապետի ներկայացրած խոստովանութեան կարգը բաղկացած է մի քանի մասից՝ խոստովանութեան ձևից, աղօթքից, հաւատքի դաւանութիւնից եւ մեղքերի թուարկումից: Կիրակոս Երզնկացու նկարագրած խոստովանութեան այս կերպը տարբերում է մեզ հասած համաբնույթ միւս բնագրերի նկարագրութիւններից»: Այլուր ութ խորհուրդների մեկնության առնչությամբ ևս նշում է՝ մեղքերի խոստովանության մասին Կիրակոս ըրբունապետի աշխատությունները և այս լուծմունքը փաստում են Հայոց Եկեղեցում այսօր գործածվող մեղքերի ընդհանրական խոստովանության բանաձևի սահմանման և ամբողջացման գործում Կիրակոս ըրբունապետի ունեցած մեծ դերը (էջ 92): «Խրատ»-ի հայ վանական միջավայրում գործնական ձեռնարկի ունիվերսալության տեսակետից հիշարժան է նաև այն, որ, ըստ ուսումնասիրողի ձեռագրական պրպտումների, այն պահպանվել է նաև հայատառ թուրքերենով:

## Նորույթներ և ճշտված հարցեր

### Ամփոփենք.

1. Գրքում առաջին անգամ տրվում է Կիրակոս Երզնկացու կենսագրությունը՝ հաստատված են ծննդյան թվականը, փուլերը, հետաքրքրությունների շրջանակն ըստ ձեռագրական ավանդույթի:

2. Առաջին անգամ ներկայացված է Կիրակոս Երզնկացու ստեղծագործությունների ամբողջական ցանկը և դրանց առնչվող մատենագիտությունը:

3. Ոչ միայն այս լուծմունքներով, այլև նոր զուգահեռներով ամբողջացվում է հայ մատենագրության մեջ ս. Եվագր Պոնտացու ազդեցության ծիրը՝ Հովհան Մանդակունուց մինչև Գրիգոր Տաթևացի:

4. Մխիթար Այրիվանեցու ճառընտիրում Վարդան Արևելցու անվան հիշատակման հավելյալ փաստով հաստատվում է Վարդան Արևելցու կողմից Եվագր Պոնտացու «Հարիւրաւորք վեցերորդք»-ի թարգմանությունը, ինչպես նաև այն, որ այս հեղինակը նրա այս երկի առաջին մեջբերողն է: Բացի այդ՝ հարչուրավորքի 540 գլուխների խորհրդաբանական բացատրությունը, որ տալիս է Կիրակոս Երզնկացին, արդեն հանդիպում է Այրիվանեցու՝ Վարդան Արևելցու աշակերտի նույն ճառընտիրում, ս. Եվագրի աշխատության հնագույն ընդօրինակության մեջ, ըստ որի այն ևս կարող է լինել Վարդան Արևելցունը: Նույն կերպ այլուր նոր տվյալներով վերահաստատվում է Գրիգոր Ակեռացու՝ Եվագր Պոնտացու երկերի մեկնիչ լինելը:

5. Ներկայացվում են այս երկու ստեղծագործությունները Եվագրի երկի, այլև մեկնությունների և քաղումների համաբնագրում:

Այս աշխատանքն ամենաարժեքավոր ներդրումներից է հայ միջնադարյան վանական հարուստ ավանդույթի, առանձին դպրոցների ու սրանց առնչությունների վերականգնման համապատկերում: Մեզ մնում է միայն հաջողություն մաղթել ուսումնասիրողին Կիրակոս Երզնկացու երկերը վերականգնելու շարունակական ու հետևողական աշխատանքներում՝ հաջորդ հատորի շտապփույթ հրատարակության սպասումով, հուրախություն բոլորիս և, իհարկե, բանական տիեզերքում այն անձի, ում հեղինակը ձոնել է իր այս հատորը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

#### ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլաձորի համալսարանի ուսուցիչները և սաները..... 5

#### ՀՐԱՆՏ ՕՀԱՆՅԱՆ

Դավիթ-Դանիելյան պալաթարը և Լազարյանները..... 34

### ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

#### ԳԱՅԱՆԵ ԹԵՐԶՅԱՆ

Գևորգ Կաղի ժամանակաշրջանի ճշգրտման փորձ..... 54

### ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

#### ԿԱՐԻՆԵ ՄՈՍԻԿՅԱՆ

«Խառնվածք» հասկացություն միջնադարյան ընկալումները..... 61

### «ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ՝ ԲԱԶՄԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ (2023 թ. հունիսի 21-23)

#### ԶԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆ

Հայոց եկեղեցու անդամագրությունն ըստ  
«Արևորդիների դարձի մասին» Ս. Ներսես Շնորհալու թղթի..... 83

#### ԷՌԵԱ ՄԱՆԵԱ ՇԻՐԻՆՅԱՆ

Ներսես Դ Կլայեցի կաթողիկոսի «Շնորհալի»  
պատվանվան մասին..... 97

#### ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Ներսես Շնորհալին խրատական բանաստեղծության հիմնադիր..... 116

#### ԼԱԼԻԿ ԽԱԶՍՏՐՅԱՆ

Պատկերավոր համեմատությունների ձևակազմական  
կաղապարները Ներսես Շնորհալու «Ողբ եղեսիոյ» պոեմում..... 127

#### ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Ներսես Շնորհալի և Կոմիտաս վարդապետ..... 139

#### ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ

Հայկական վերածննդի երաժշտաբանաստեղծական արվեստի որոշ  
բնութագրիչներ՝ Ս. Ներսես Շնորհալու ժառանգության մեջ..... 156

#### ՀԱՍՄԻԿ ԻՐԻՑՅԱՆ

Ներսես Շնորհալու նորահայտ բնագիրը ՄՄ 3839 ձեռագրում (անգլ.)..... 166



## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՍԵՅՆԳԵՀՆԱՍԻՄ ՖԱԹԵՄԻ, ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*Մատենադարանի այլալեզու ֆոնդի  
չորս միավորի նկարագրություն (անգլ.)*..... 179

### ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Երկու հնատիպ հմայիլների ուսումնասիրության հետքերով*..... 195

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

### ԷՍԹԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Գրիգոր Լուսավորչին վերագրվող տեսիլ-հարցումը  
(համեմատական բնագիր)*..... 212

### ԱՐԵՎԻԿ ԱՐԱԲՅԱՆ

*Առաքել Սյունեցու «Ղազարու յարութեան» և  
«Մեծատան եւ Ղազարու» անտիպ տաղերը*..... 251

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

### ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ

*Զափաթիա Ծայրագոյն վարդապետ Բաղումեան,  
Կիրակոս Երզնկացու՝ Սուրբ Եւագր Պոնտացու երկերի լուծմունքները,  
խմբագիր՝ Գ. Տէր-Վարդանեան, Երևան, Մատենադարան, 2022*..... 260

### ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Les Arts Libéraux et les Sciences dans l' Arménie  
Ancienne et Médiévale («Ազատ արվեստները և գիտությունները  
հին և միջնադարյան Հայաստանում»), sous la direction  
de Valentina Calzolari, Paris: Vrin 2022*..... 270

## ԲԱՆԱՎԵՃ

### ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Դարձյալ հին Երևանի աշտարակի և  
Երկուերեսնի եկեղեցու պարզաբանման շուրջ*..... 280

*Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը  
վերաբերող պահանջներ*..... 296

## CONTENTS

### HISTORY

#### **KAREN MATEVOSIAN**

The Teachers and Students of Gladzor University.....5

#### **HRANT OHANYAN**

The Role of the Lazaryans in the Davit-Daniel Conflict.....34

### PHILOLOGY

#### **GAYANE TERZIAN**

An Attempt at Dating the Life of Gevorg Kagh.....54

### NATURAL SCIENCES

#### **KARINE MOSIKYAN**

Medieval Conceptions of Temperament.....61

### PROCEEDINGS OF THE 6TH INTERNATIONAL CONFERENCE “NERSĒS SHNORHALI THE GRACIOUS PATRIARCH” (June 21-23, 2023)

#### **PROTO-ARCHIMANDRITE ZACHARIA BAGHUMYAN**

Membership in the Armenian Church According to St. Nersēs  
Gracious' Letter “On The Conversion of the Sons of the Sun”.....83

#### **ERNA MANEA SHIRINIAN**

About the Title “Graceful” of Catholicos  
Nersēs IV Klayets‘i.....97

#### **VANO EGHIAZARYAN**

Nersēs Shnorhali as the Founder of the Genre  
of Didactic Poetry.....116

#### **LALIK KHACHATRYAN**

Formal Models of Figurative Comparisons  
in the Poem “Elegy on the Capture of Edessa”  
by Nersēs Shnorhali.....127

#### **LUSINE SAHAKYAN**

Nersēs Shnorhali And Komitas Vardapet.....139

**MHER NAVOYAN**

Some Characteristics of the Musical and Poetic Art  
of the Armenian Renaissance in the Heritage  
of St. Nerses Shnorhali .....156

**HASMIK IRITSYAN**

A Newly Discovered Work of Nersēs Shnorhali  
in Ms M3839 .....166

**BIBLIOGRAPHY****SAYEDEHNASIM FATEMI, HAYKAZ GEVORGYAN**

Description of Four Units of Matenadaran's Foreign Language Fund .....179

**SATENIK GRIGORYAN**

On Two 18<sup>th</sup> C. Scroll Amulets .....195

**PUBLICATIONS****ESTER PETROSYAN**

The Revelation Attributed to Gregory the Illuminator .....212

**AREVIK ARABYAN**

Arak‘el Siwnets‘i and his Unpublished Verses  
“The Resurrection of Lazarus” and “The Rich Man and Lazarus” .....251

**BOOK REVIEWS****ARUSYAK TAMRAZYAN**

Proto-Archimandrite Zacharia Baghumyan, *Kirakos Erznkais‘i’s  
Commentaries on Saint Evagrius Ponticus’ Works*, Yerevan, 2022 .....260

**ARMINE MELKONYAN**

*Les Arts Libéraux et les Sciences dans l’Arménie Ancienne et Médiévale*,  
Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022 .....270

**DISCUSSION****ARSEN HARUTYUNYAN**

Once More on the Interpretation of Old Yerevan’s Tower  
and Church Yerkueresni (St. Paul and Peter) .....280

## СОДЕРЖАНИЕ

## ИСТОРИЯ

**КАРЕН МАТЕВОСЯН**

Преподаватели и учащиеся Гладзорского университета ..... 5

**ГРАНТ ОГАНЯН**

Противостояние Давид-Даниэл и Лазаревы ..... 34

## ФИЛОЛОГИЯ

**ГАЯНЕ ТЕРЗЯН**

Опыт уточнения времени жизни Геворга Кага ..... 54

## ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

**КАРИНЕ МОСИКЯН**

Средневековые представления о темпераменте ..... 61

**ИЗ МАТЕРИАЛОВ 6-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ  
“БЛАГОДАТНЫЙ ПАТРИАРХ НЕРСЕС ШНОРАЛИ”  
(21-23 июня, 2023 г.)**

**ПРОТОАРХИМАНДРИТ, ЗАХАРИЯ БАГУМЯН**

Принятие в лоно армянской церкви согласно посланию Св. Нерсеса Благодатного «Об обращении Сынов Солнца» ..... 83

**ЭРНА МАНЕА ШИРИНЯН**

О титуле «Шнорали» католикоса Нерсеса IV Клаеци ..... 97

**ВАНО ЕГИАЗАРЯН**

Нерсес Благодатный – основоположник жанра поучительных стихотворений ..... 116

**ЛАЛИК ХАЧАТРЯН**

Формальные модели образных сравнений в поэме «Элегия на взятие Эдессы» Нерсеса Шнорали ..... 127

**ЛУСИНЕ СААКЯН**

Нерсес Шнорали и Комитас Архимандрит ..... 139

**МГЕР НАВОЯН**

Некоторые характеристики музыкально-поэтического искусства армянского Возрождения в наследии Св. Нерсеса Шнорали.....156

**АСМИК ИРИЦЯН**

Новонайденный текст Нерсеса Шнорали в рукописи № 3839 из собрания Матенадарана.....166

**БИБЛИОГРАФИЯ****ФАТЕМИ СЕЙЕДЕХНАСИМ, АЙКАЗ ГЕВОРГЯН**

Описание четырех единиц иноязычного фонда Матенадарана.....179

**САТЕНИК ГРИГОРЯН**

О двух старопечатных свитках-оберегах XVIII в.....195

**ПУБЛИКАЦИИ****ЭСТЕР ПЕТРОСЯН**

Откровение, приписываемое Григорию Просветителю.....212

**АРЕВИК АРАБЯН**

Неизданные стихи “О воскрешении Лазаря” и “О богаче и Лазаре” Аракела Сюнеци.....251

**РЕЦЕНЗИИ****АРУСЯК ТАМРАЗЯН**

Протоархимандрит Захария Багумян, *Толкование Киракоса Ерзнкаци на сочинения Евагрия Понтийского*, Ереван, 2022.....260

**АРМИНЕ МЕЛКОНЯН**

*Les Arts Libéraux et les Sciences dans l'Arménie Ancienne et Médiévale*, Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022.....270

**ДИСКУССИЯ****АРСЕН АРУТЮНЯН**

Вновь об интерпретации башни и церкви Еркуересни (Св. Павла и Петра) старого Еревана.....280

**ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**Հատոր 36**

**BULLETIN OF MATENADARAN**

**Volume 36**

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

**Том 36**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի  
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի  
Շապիկին՝ *Ձեռ. եղմ. 365՝ Եսայի Նչեցին Գլաձորի համալսարանի  
ուսուցիչների և սաների հետ*

Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան  
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 19

տպամանակ՝ 150

Մատենադարան

Մետրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի  
հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033  
publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝

[banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/](http://banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/)